

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՉԻՆՔ

| Անուն, Ազգանուն | Պաշտոն | Պատասխանատվության շրջանակ |
|------------------|--|---|
| Վահրամ Բեգլարյան | տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն | <p>Որպես գլխավոր տնօրեն՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից, ✓ ներկայացնում է Ընկերությունը ԼՂՀ-ում և արտասահմանում, ✓ գործում է առանց լիազորագրի, ✓ տալիս է լիազորագրեր, ✓ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային, ✓ բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ, ✓ Ընկերության Խորհրդի հաստատման է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, ✓ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, ✓ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին, ✓ աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ: <p>Որպես Խորհրդի նախագահ՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ մասնակցել Խորհրդի նիստերին, ✓ մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը: |

| | | |
|------------------|----------------------------|---|
| Սպարտակ Թևոյան | Տնօրենների խորհրդի նախագահ | <ul style="list-style-type: none"> ✓ կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, ✓ գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք, ✓ կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը, ✓ նախագահում է ԲԸԺ-ներում: |
| Մերուժան Բաբայան | Տնօրենների խորհրդի անդամ | <ul style="list-style-type: none"> ✓ մասնակցել Խորհրդի նիստերին, ✓ մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը: |
| Արմեն Գասպարյան | Տեխնիկական տնօրեն | <ul style="list-style-type: none"> ✓ կատարում է Ընկերության էլեկտրահիդրոկայանների էլեկտրաէներգիայի արտադրության պլանավորում և աշխատանքի ռեժիմների մշակում |
| Ժան Հովհաննիսյան | Ֆինանսական տնօրեն | <ul style="list-style-type: none"> ✓ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության կառավարում |
| Արայիկ Դավթյան | Գլխավոր հաշվապահ | <ul style="list-style-type: none"> ✓ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը, ✓ աջակցում է Ընկերության սեփականության պահպանման, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների խնայողաբար օգտագործման նկատմամբ վերահսկողությանը, ✓ կազմակերպում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ✓ գլխավորում է նախահաշիվների կազմման սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերի նախապատրաստման աշխատանքները: |

**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ
2011Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)**

Կառավարման մարմինների միջանկյալ զեկույց

1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է թողարկողը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է:

Հաշվետու եռամսյակում ընկերության արտադրանքը կազմել է 35.172.930 կվտ/ժ էլեկտրաէներգիա (334.309.140 ՀՀ դրամ), որից 33.200.400 կվտ/ժ էլեկտրաէներգիան (298.803.600 ՀՀ դրամ) արտադրվել է Սարսանգ ՀԷԿ-ի միջոցով, իսկ 1.972.530 կվտ/ժ էլեկտրաէներգիան (35.505.540 ՀՀ դրամ) արտադրվել է Թրդի-1 ՀԷԿ-ի միջոցով:

Ներկայում ընկերությունն իրականացնում է նաև երեք նոր փոքր ՀԷԿ-երի (Մատաղիս-1, Մատաղիս-2 և Թրդի-2) շինարարություն:

Թրդի-2 ՀԷԿ-ը նախատեսվում է շահագործման հանձնել 2011թ. նոյեմբերի սկզբին իսկ Մատաղիս-1 և Մատաղիս-2 ՀԷԿ-երը 2012 թ. առաջի եռամսյակում:

Ընկերությունը հիմնականում առնչվում է հետևյալ ռիսկերի և անորոշությունների հետ.

Արժույթային ռիսկեր. Այդ ռիսկերը ներառում են ՀՀ դրամի և այլ արժույթների փոխարժեքի զգալի փոփոխությունների հնարավորությունը, ինչպես նաև ՀՀ և ԼՂՀ դրամային կառույցների կողմից միջամտության կամ փոփոխությունների հնարավորությունը:

Բնակլիմայական պայմանների ռիսկեր. Բնակլիմայական պայմաններն ունեն էական ազդեցություն ընկերության գործունեության վրա: Ընկերության հասույթը էականորեն պայմանավորված է ջրի հոսքի ծավալներով: Չնայած նրան, որ նախկին մի քանի տարիների ջրի հոսքի ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս բավականին մեծ ճշտությամբ կատարել կանխատեսումներ, այնուամենայնիվ, բնակլիմայական գործոնով է պայմանավորված ընկերության հասույթի ծավալը և հետևաբար ֆինանսական ցուցանիշները:

Նշված ռիսկերն ու անորոշություններն էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

Չեռքբերված և մարված վարկերի ծավալները բերված են թիվ 1 աղյուսակում.

Աղյուսակ 1

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ վարկերի ծավալը 2011թ. երրորդ եռ.

| Վարկի կամ փոխառության աղբյուր | Նոր վարկեր | Մարումներ |
|-------------------------------|---|---|
| «Արմավիսբանկ» ՓԲԸ | 248.200 Եվրո | 237.000 Եվրո 46.965.000 ՀՀ դրամ |
| ԼՂՀ Ֆինանսների նախարարություն | | 300.000 ԱՄՆ դոլար |
| «Արցախբանկ» ՓԲԸ | 2.000.000 ԱՄՆ դոլար 13.000.000 ՀՀ դրամ | 142.000 ԱՄՆ դոլար 13.000.000 ՀՀ դրամ |
| Արցախի ազատամարտ. միություն | 500.000 ԱՄՆ դոլար | 500.000 ԱՄՆ դոլար |
| Ընդամենը | 2,500,000 ԱՄՆ դոլար 13,000,000 ՀՀ դրամ 248.200 Եվրո | 942.000 ԱՄՆ դոլար 59.965.000 ՀՀ դրամ 237.000 Եվրո |

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 2 և թիվ 3 աղյուսակներում:

Աղյուսակ 2

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2011թ. 3 եռամսյակ

| Ցուցանիշ | Հազ. դրամ |
|---------------------------------------|-----------|
| Արտադրանքի իրացումից հասույթ | 334,309 |
| Իրացված արտադրանքի ինքնարժեք | -82,172 |
| Իրացման ծախսեր | -648 |
| Վարչական ծախսեր | -41,475 |
| Գործառնական գործունեությունից շահույթ | 206,415 |
| 2001 իր. 3 եռամսյակի շահույթ | 184,524 |
| Դեբիտորական պարտք | 844,779 |
| Կրեդիտորական պարտք | 6,272,511 |

Աղյուսակ 3

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2011թ. 3 եռամսյակ

| Ցուցանիշի անվանումը | 01.10.2011 թ. |
|---|---------------|
| Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) | 31 |
| Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) | 2.7 % |
| Ակտիվների շահութաբերություն (ROA) | 1.7 % |
| Չուտ շահույթի մարժա (NPM) | 31.8 % |
| Կապիտալի համարժեքության գործակից | 56.7 % |
| Ֆինանսական կախվածության գործակից | 76.5 % |
| Բացարձակ իրացվելության գործակից | 0.02 |
| Ընթացիկ իրացվելության գործակից | 0.3 |
| Ընդհանուր իրացվելության գործակից | 0.4 |
| Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 2.7 |
| Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 136.3 |
| Պաշարների շրջանառելիության գործակից | 11.1 |
| Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով | 32.9 |
| Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 0.05 |
| Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 7808.6 |

2) Այն կարևոր դեպքերի նկարագիրը, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցը պատրաստելու օրը: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

- 2011 թվականի հուլիսի 22-ին տեղի է ունեցել Ընկերության տնօրենների խորհրդի նիստ , վորտեղ քննարկվել են ընդացիկ հարցեր , բացի այդ ուսումնասիրվել են «Թրդի-3» ՀԷԿ-ի սարքավորումների պատվիրման համար առաջարկները :
- 2011 թվականի օգոստոսի 1-ին հեռակա կարգով գումարվել է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ժողով, որտեղ ընդունվել է որոշում՝ Լրացուցիչ տեղաբաշխել 3.673.926 (երեք միլիարդ վեց հարյուր յոթանասուներեք միլիոն ինը հարյուր քսանվեց հազար) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով , 3.673.926000 (երեք միլիոն վեց հարյուր յոթանասուներեք

հազար ինը հարյուր քսանվեց) հատ 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմս:

- 2011 թվականի օգոստոսի 3-ին տեղի է ունեցել Ընկերության տնօրենների խորհրդի նիստ , որտեղ ընդունվել են որոշումներ

- Հաստատել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի 1,000 ՀՀ դրամ անվանական արժեքով 3,637,962 հատ ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման պայմանները`

| | | |
|----|---|--|
| 1. | Բաժնետոմսերի դասը | Հասարակ անվանական բաժնետոմսեր |
| 2. | Բաժնետոմսի ձևը | Ոչ փաստաթղթային |
| 3. | Տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի ընդհանուր ծավալը | 3 673 926 000 ՀՀ դրամ |
| 4. | Անվանական արժեքը | 1 000 ՀՀ դրամ |
| 5. | Քանակը | 3 673 926 հատ |
| 6. | Շրջանառության ձևը | ազատ շրջանառության իրավունքով |
| 7. | Տեղաբաշխողի մասին | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տեղաբաշխման ուղղված հարաբերությունները կարգավորվում են «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի և Ընկերության միջև կնքվող պայմանագրով: |
| 8. | Վճարման պայմանները (միջոցը և ժամկետները) և կարգը | Տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվում է միայն դրամական եղանակով: Բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվում են ՀՀ դրամով` մինչև տեղաբաշխման ավարտի օրը: Վճարումներն ընդունվելու են անկանխիկ ձևով` «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված բանկային հաշվին միանվագ կերպով փոխանցումների միջոցով: Ֆիզիկական անձինք Բաժնետոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ գումարները Բանկ կարող են միանվագ կերպով մուտքագրել նաև կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում ներդրող բաժնետոմսերի ձեռք բերման հայտին կից Բանկ է ներկայացնում նաև անձնագրի պատճենը: |
| 9. | Բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները և պարտականությունները | Բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն Օրենքի և Ընկերության կանոնադրության համաձայն իրավունք ունի. որպես իրավունք • մասնակցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին` վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, • ֆինանսական տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր, • մասնակցել Ընկերության կառավարմանը, ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից, • առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ, • ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (բացառությամբ գաղտնի փաստաթղթերի) • Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի, • առաջարկություններով հանդես գալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում, • Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով, • հայցով դիմել դատարան` Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և |

| | | |
|-----|---|--|
| | | <p>այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,</p> <ul style="list-style-type: none"> • Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը, • օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը • օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից <p>որպես պարտավորություն</p> <ul style="list-style-type: none"> • հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը պարտավոր են չիրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ զաղտնիք ներկայացնող տեղեկությունները: • Բաժնետերերը կարող են կրել կանոնադրությամբ նախատեսված և օրենքին ու այլ իրավական ակտերին չհակասող այլ պարտավորություններ: Ընկերության հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը կարող են չկատարել կանոնադրությամբ սահմանված լրացուցիչ պարտականությունները, եթե նա դեմ է քվեարկել կամ չի մասնակցել տվյալ հարցերով քվեարկությանը: |
| 10. | Բաժնետոմսերի տեղաբաշխման սահմանափակումները | <p>Տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերը նախատեսվում է տեղաբաշխել Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի կողմից նախապատվության իրավունքի կիրառմամբ: Բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում չտեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման նկատմամբ սահմանափակումներ չկան:</p> |
| 11. | Միջոցների օգտագործման նպատակը | <p>Ընկերության կողմից կառուցվող նոր ՀԷԿ-երի կառուցման համար կապիտալ շինարարական աշխատանքների ֆինանսավորման, այդ թվում՝ տվյալ ՀԷԿ-երի կառուցման համար կապիտալ շինարարական աշխատանքների ֆինանսավորման համար Ընկերության կողմից օգտագործված միջոցների վերաֆինանսավորման նպատակով:</p> |
| 12. | Բաժնետոմսերի հաշվառման համակարգը | <p>Բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը կիրականացվի ՀԿԳ-ի միջոցով՝ իր կանոններով սահմանված կարգով: Բաժնետոմսերը կարող են հաշվառվել այլ պահառուի կողմից՝ բաժնետոմսերի սեփականատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:</p> |

- 2011 թվականի օգոստոսի 30-ին գրանցվել է «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության բաժնետոմսերի ազդագիրը:
- 2011 թվականի հոկտեմբերի 24-ին ավարտվել է Ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխումը՝
 - Վաճառված արժեթղթերի ընդհանուր քանակը կազմել է 3,287,926 (երեք միլիոն երկու հարյուր ութսոււնյոթ հազար ինն հարյուր քսանվեց) հատ:

3) Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

- Սարսանգ ՀԷԿ-ի 2011 թ. 4-րդ եռ. արտադրանքի կանխատեսում - 41 մլն կվտ/ժ կամ 369.000.000 դրամ:
- Թրդի-1 ՀԷԿ-ի 2011 թ. 4-րդ եռ. արտադրանքի կանխատեսում - 2.3 մլն կվտ/ժ կամ 41.400.000 դրամ:
- Թրդի-2 ՀԷԿ-ի 2011 թ. 4-րդ եռ. արտադրանքի կանխատեսում - 1 մլն կվտ/ժ կամ 18.000.000 դրամ: